Audit
ARMENIA

«Տ-ՔՈՄՓԱՆԻ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Audit ARMENIA

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Համախմբված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Համախմբված Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Համախմբված Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Համախմբված Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Համախմբված Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Տ-Քոմփանի» Փակ Բաժնետիրական Ընկերության Ղեկավարությանը և Բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տ-Քոմփանի» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ նաև Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Խմբի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական արդյունքի և համախմբված դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

«Տ-Քոմփանի» ՓԲԸ-ի 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. հունիսի 28-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Բիզնեսի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Բիզնեսի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Բիզնեսը լուծարելու կամ Բիզնեսի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Բիզնեսի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բիզնեսի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Բիզնեսի

անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բիզնեսին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
20 հունիսի, 2022թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան
Տնօրեն-Բաժնետեր

Տիգրան Սահակյան
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

«Տ-ՔՈՄՓԱՆԻ» ՓԲԸ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	224,154	340,096
Գուդվիլ	6	109,298	109,298
		333,452	449,394
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	1,579,263	999,479
Դեբիտորական պարտքեր	10	909,383	1,110,255
Տրամադրված փոխառություններ	8	3,093,504	3,405,051
Դրամական միջոցներ	11	2,212,135	291,740
		7,794,285	5,806,525
Ընդամենը ակտիվներ		8,127,737	6,255,919
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	12	1	1
Չբաշխված շահույթ		5,163,001	4,909,672
Ընդամենը մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի սեփական կապիտալ		3,694,397	3,817,709
Չվերահսկվող բաժնեմաս	7	1,468,603	1,091,963
		5,163,001	4,909,672
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	-	-
Ընթացիկ պարտավորություններ		-	-
Վարկեր և փոխառություններ	13	204,645	690,060
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	2,730,398	428,703
Շահութահարկի գծով պարտավորություն		29,693	227,484
		2,964,736	1,346,247
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		8,127,737	6,255,919

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 20-ին՝

Տնօրեն

Տիգրան Ասլանյան

Գլխավոր հաշվապահ

Վլադիմիր Սահակյան

«Տ-ՔՈՄՓԱՆԻ» "T-COMPANY" «Տ-ԿՈՄՊԱՆԻ» 02669737

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ	15	5,130,541	5,147,223
Վաճառքի ինքնարժեք	16	(3,069,523)	(2,777,345)
Համախառն շահույթ		2,061,018	2,369,878
Այլ եկամուտ	17	60,711	132,850
Իրացման ծախսեր	18	(320,493)	(247,803)
Վարչական ծախսեր	19	(163,242)	(141,647)
Այլ ծախսեր	20	(70,736)	(171,651)
		1,567,258	1,941,627
Ֆինանսական ծախս, զուտ	21	(80,353)	(56,515)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		(61,979)	68,382
Շահույթ մինչև հարկերը		1,424,926	1,953,494
Շահութահարկի գծով ծախս	22	(121,597)	(370,655)
Տարվա շահույթ, որը վերագրելի է՝		1,303,329	1,582,839
Մայր կազմակերպության բաժնետերերին		926,689	1,310,490
Չվերահսկվող մասնակցությանը		376,640	272,349
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		1,303,329	1,582,839

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/վնաս	Մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	1	2,507,218	2,507,219	819,614	3,326,833
Տարվա շահույթ	-	1,310,490	1,310,490	272,349	1,582,839
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,310,490	1,310,490	272,349	1,582,839
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	3,817,708	3,817,708	1,091,963	4,909,672
Տարվա շահույթ	-	926,689	926,689	376,640	1,303,329
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	926,689	926,689	376,640	1,303,329
Շահաբաժիններ		(1,050,000)	(1,050,000)		(1,050,000)
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	3,694,397	3,694,397	1,468,603	5,163,001

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	1,303,329	1,582,839
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս	121,597	370,655
Մաշվածության ծախս	348,159	119,004
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը	61,979	(68,382)
Վարկերի տոկոսների փոխհատուցումից եկամուտ	(23,540)	-
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ, զուտ	(14,821)	
Ֆինանսական ծախս. զուտ	80,353	56,515
Գործառնական օգուտ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	1,877,056	2,060,631
Պաշարների փոփոխություն	(579,784)	(216,290)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	193,741	(712,172)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	2,353,100	(21,485)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	3,844,113	1,110,684
Վճարված տոկոս,զուտ	(80,353)	(56,515)
Վճարված շահութահարկ	(319,388)	(316,885)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	3,444,372	737,284
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում, զուտ	(217,396)	(254,412)
Տրամադրված փոխառություններ	311,547	1,024,510
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	94,151	770,098
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և ֆինանսական վարձակալությունից մուտքեր	(581,288)	(1,918,524)
Շահաբաժիններ	(1,050,000)	-
Վարկի տոկոսի փոխհատուցում	23,540	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,607,748)	(1,918,524)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	1,930,775	(411,142)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(10,380)	2,570
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	291,740	700,312
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	2,212,135	291,740

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Տ-Կապիտալ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ «Ընկերություն») գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից 07.11.2017թ.-ին՝ 286.120.991805 գրանցման համարով (ՀՎՀՀ՝ 02669737): 26.12.2017թ.-ին վերանվանվել է որպես «Տ-Քոմփանի» Փակ Բաժնետիրական Ընկերություն (այսուհետ նաև Մայր, իսկ Դուստրերի հետ միասին նաև Խումբ):
Մայր Ընկերության միակ բաժնետերն է Տիգրան Ասլանյանը:

Խմբի գործունեության հիմնական տեսակներն են՝

- Բժշկական և այլ արտահագուստի արտադրություն, բժշկական պարագաների ներմուծում և մեծածախ վաճառք,
- Էլեկտրական հոսանքի հաշվիչների իրանների պատրաստում, լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանների և մետաղական կոնստրուկցիաների արտադրություն, ՍԻՊ արմատուրայի, մետաղական արկղերի և երկաթբետոնյա սյուների արտադրություն, ներմուծում և մեծածախ վաճառք,
- Կահույքի արտադրություն և մեծածախ վաճառք:

<u>Դուստր ընկերություններ</u>

Ընկերության անվանումը	Գրանցման համար	Գրանցման ամսաթիվ	Կանոնադրական կապիտալի չափը	Մայր ընկերության մասնաբաժինը	Գործունեության ոլորտ
«Տ-Ինդասթրի» ՓԲԸ	69.120.934981	17.11.2016թ.	1,000 ՀՀ դրամ	100%	կահույքի արտադրություն և մեծածախ վաճառք
«Տ-Մետալ» ՓԲԸ	282.120.937871	08.12.2016թ.	1,000 ՀՀ դրամ	100%	լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանների և մետաղական կոնստրուկցիաների արտադրություն
«Տ-Պլաստ» ՓԲԸ	264.120.940440	30.12.2016թ.	1,000 ՀՀ դրամ	100%	էլեկտրական հոսանքի հաշվիչների իրանների պատրաստում
«Տեֆֆի» ՓԲԸ	273.120.892866	22.03.2016թ.	1,100 ՀՀ դրամ	70% լրացուցիչ 1 արտոնյալ բաժնետոմս՝ 100 ՀՀ դրամ անվանական արժեքով	մետաղական արկղերի և երկաթբետոնյա սյուների արտադրություն, ներմուծում և մեծածախ վաճառք
«Տաշիր-Կար» ՓԲԸ	69.120.955486,	25.04.2017թ.	1,000 ՀՀ դրամ	100%	բժշկական և այլ արտահագուստի արտադրություն և հարակից ծառայությունների մատուցում
«Սոլանում» ՓԲԸ	264.120.957030	04.05.2017թ.	1,000 ՀՀ դրամ	100%	ՍԻՊ արմատուրայի արտադրություն, ներմուծում և մեծածախ վաճառք

«Տ-Մեդ» ՓԲԸ	286.120.972973	05.09.2017թ.	1,000 ՀՀ դրամ	100%	բժշկական պարագաների ներմուծում և մեծածախ վաճառք
«Տ-Էլեկտրո» ՓԲԸ	69.120.974726	20.09.2017թ.	1,000 ՀՀ դրամ	80%	սարքավորումների և այլ պարագաների ներմուծում և մեծածախ վաճառք

Մայր ընկերության տնօրենն է Տիգրան Վլադիմիրի Ասլանյանը, որը միաժամանակ հանդիսանում է Մայր ընկերության միակ բաժնետերը:

Մայր ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Խումբը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է Համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Խմբի Համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբած ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև: Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարրեր	Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:
Այս համախմված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:
Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական Հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:
Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության համախմված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո	1 ապրիլի 2021թ.
ՀՀՄՍ 16	Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 16	2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 4	ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման ներկայացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 17	ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում-համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 12	Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.

3 Համախմբման հիմքեր

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Մայր կազմակերպության (կամ Խմբի) կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Մայրն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարում է ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից, մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռք բերված դուստր ընկերությունները հաշվառվում են «գնման» մեթոդով: Ձեռք բերման ժամանակ ձեռք բերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռք բերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ փոքրամասնության բաժնեմասից:

Ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գուդվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Փոքրամասնության բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոքրամասնության բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Փոքրամասնության բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները չեն գերազանցում փոքրամասնության բաժնեմասը դուստր ընկերության սեփական կապիտալում, եթե վերջինս պարտավորված չէ ֆինանսավորել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին: Ձեռքբերման արժեքի և ձեռքբերված դուստր ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի տարբերությունը դեբետագրում կամ կրեդիտագրվում է կուտակված շահույթին:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

4.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	6.42	7.02
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Եվրո	542.61	641.11

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ,	20 տարի,
Տնտեսական և գրասենյակային գույք,	5 տարի,
Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1-20 տարի:

4.3 Արժեզրկում

Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե

նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

4.4 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հողը կամ շենքը, որը պահվում է սեփականատիրոջ մոտ կամ ֆինանսական վարձակալության դեպքում՝ վարձակալի մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են Խմբի կողմից պահվող այլ ակտիվներից:

Խմբի ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) պետք է չափվի ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

Ներդրումային գույքի օգտակար ծառայության ժամկետը համընկնում է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի հետ:

4.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և գնահատված վաճառքի գնից՝ հանած համալրման և վաճառքի գնահատված ծախսումները, նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:
Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:
Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով: Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով: Խումբը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման և հնացման» պահուստ:

4.6 Վարձակալություն

Խումբը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ,և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն՝ կիրառելով Խմբի վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Խումբը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս Խումբը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

ՖՀՄՍ 16 ստանդարտով սահմանված գործնական բնույթի պարզեցումներ կիրառելու հնարավորությունը իրացնելով՝ Խումբը չի ճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ այն վարձակալությունների համար, որոնց ժամկետը կազմում է մինչև 12 ամիս, կամ վարձակալության հիմքում ընկած ակտիվը փոխարժեք է: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարների գծով ծախսերը Խումբը ճանաչում է գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտին անցումը նշանակալի ազդեցություն չունի Խմբի համախմված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Խմբի ղեկավարության գնահատմամբ այն չունի 12 ամսվանից ավել ժամկետով վարձակալություններ՝ այդ թվում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Խմբի կնքած վարձակալության պայմանագրերի համաձայն՝ դրանք կարող են միակողմանի լուծվել ցանկացած պահի՝ մեկ ամիս առաջ ծանուցման պայմանով: Ընդ որում վերոնշյալ պայմանագրերով սահմանված նորացման կամ գնման օպցիոններ և սահմանափակումներ առկա չեն:

4.7 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

4.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումներ:
Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումմ որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):
Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,) որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և ննկերությունը մտադիր է զուտ հիմքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.9 Հասույթ

Խումբը զբաղվում է բժշկական և այլ արտահագուստի արտադրությամբ, բժշկական պարագաների ներմուծմամբ և մեծածախ վաճառքով, էլեկտրական հոսանքի հաշվիչների իրանների պատրաստմամբ, լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանների և մետաղական կոնստրուկցիաների, ՍԻՊ արմատուրայի, մետաղական արկղերի և երկաթբետոնյա սյուների արտադրությամբ, ներմուծմամբ և մեծածախ վաճառքով, կահույքի արտադրությամբ և մեծածախ վաճառքով:

Հասույթ պայմանագրերից
Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը,
2 Բացահայտել կատարման պարտականությունները,
3 Որոշել գործարքի գինը,
4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև,
5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են;

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Ապրանքների վաճառք
Ապրանքների վաճառքը ճանաչվում է ապրանքի սեփականության հետ կապված էական ռիսկերը և սեփականությունից ստացվող օգուտները հաճախորդին փոխանցելուց հետո, ինչը սովորաբար տեղի է ունենում, երբ Խումբը վաճառում կամ առաքում է ապրանքը հաճախորդին, հաճախորդն ընդունում է ապրանքը, և համապատասխանաբար դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը հիմնավորված է:

Վարձակալական եկամուտ
Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4.10 Աշխատակիցներին հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ
Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ
Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:
Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.11 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Խումբը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը, փոխառությունները, ֆինանսական լիզինգը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

5 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր և շինություններ (կառուցվածքներ)	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	8,040	102,575	-	215,761	19,065	2,480	347,921
Ավելացում, կապիտալացում	4,033	134,205		124,336		8,509	271,083
Օտարում		(39,141)		(2,111)			(41,252)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,073	197,639	-	337,986	19,065	10,989	577,752
Ավելացում, կապիտալացում		38,966	38,537	54,026		25,586	157,115
Օտարում, դուրսգրում		(54,418)		(1,113)		(56)	(55,587)
Վերադասակարգում	(12,073)	186,773	-	(185,064)	0	10364	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	368,960	38,537	205,835	19,065	46,883	679,280
Կուտակված մաշվածություն							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,734	47,247	-	93,786		463	143,230
Տարվա ծախս	1,016	51,131	-	65,881		976	119,004
Օտարում		(22,468)		(2,110)		-	(24,578)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,750	75,910	-	157,557	-	1,439	237,656
Տարվա ծախս	13	231,674	25,772	76,445	-	14,255	348,159
Օտարում	(2,763)	(39,360)	-	(87,865)	-	(701)	(130,689)
Վերադասակարգում	(2,764)	85,715	-	(84,986)	-	2,035	-
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	(2,764)	353,939	25,772	61,151	-	17,028	455,126
Հաշվեկշռային արժեք							
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,323	121,729	-	180,429	19,065	9,550	340,096
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,764	15,021	12,765	144,684	19,065	29,855	224,154

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:

Մաշվածության գծով ծախսը 2021թ. կազմել է 348,159 հազ. դրամ (2020թ. կազմել է 119,004 հազ. դրամ):

6 Գուդվիլ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Սոլանում» ՓԲԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գուդվիլ	84,999	84,999
«Տաշիր-Կար» ՓԲԸ-ի բաժնեմասի ձեռքբերման գուդվիլ	24,299	24,299
	109,298	109,298

7 Չվերահսկվող բաժնեմաս

Հազար դրամ		
Տարեսկզբի մնացորդ	1,091,963	819,614
Տարվա ֆինանսական արդյունքի չվերահսկվող բաժնեմաս	376,640	272,349
Տարեվերջի մնացորդ	1,468,603	1,091,963

8 Տրամադրված փոխառություններ

		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Անվանում	Արժույթ	Արտարժույթ	հազ. դրամ	Արտարժույթ	հազ. դրամ
Արմհոլդինգ ՓԲԸ	AMD	-	564,186		-
Արմհոլդինգ ՓԲԸ	USD	610,820	293,279		-
OOO ARMHOLDING	RUB	9,662,859	62,036		-
Տ-քնսթրաքշն ՓԲԸ	AMD	-	24,500		24,500
Վարդան Վարդանյան	AMD	-	86,900	-	87,400
Լիեն Քոմփանի ՓԲԸ	USD	10,069	5,262	10,069	5,262
Տիգրան Ասլանյան	AMD	-	130,622	-	1,220,537
Տիգրան Ասլանյան	RUB	272,104,523	1,746,911	-	1,910,174
Տիգրան Ասլանյան	USD	142,040	68,199	-	-
ՆԵՖՏՊՌՈԴՈՒԿՏԻՆՎԵՍՏ ՓԲԸ	AMD	-	24,405	-	24,405
ՏԵՔՍ ՓԲԸ	AMD		8,411		9,041
ՏԵՔՍ ՓԲԸ	USD	107,350	51,543	107,350	56,100
ՄԵՏԱԼ ԻՄՊՈՐՏ ՍՊԸ	AMD	-	-	-	3,024
OOO PROMINVEST	RUB	4,228,537	27,147	-	-
Մետալուրգ ՓԲԸ	AMD	-	-	-	64,538
Սերվիստրոյ ՍՊԸ	AMD	-	-		70
Պատրաս ՓԲԸ	AMD	-	103	-	-
Ընդամենը	-	-	3,093,504	-	3,405,051

9 Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք, նյութեր	1,118,013	753,281
Ապրանքներ	164,100	223,646
Արտադրանք	281,582	22,074
Այլ պաշարներ	15,568	478
	1,579,263	999,479

2021թ. դեկտեեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված պաշարներ:

10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական վաճառքների գծով	677,558	864,257
Տրված կանխավճարներ	194,654	161,786
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	34,982	82,142
Այլ դեբիտորական պարտքեր	2,189	2,070
	909,383	1,110,255

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	1,480,414	136,042
Բանկային հաշիվներ	408,923	144,977
Բանկային հաշիվներ արտարժույթով	142,558	10,721
Բանկային ավանդներ	180,240	-
	2,212,135	291,740

Դրամական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

12 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	1	1
	1	1

Կանոնադրական կապիտալ

Մայր կազմակերպության կանոնադրական կապիտալը 31.12.2021թ.-ի դրությամբ կազմել է 1 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1 ՀՀ դրամ անվանական արժեքով 1,000 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից: 31.12.2021թ.-ի դրությամբ Մայր ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված ու վճարված են: Դրանք պատկանում են Մայր ընկերության միակ բաժնետեր Տիգրան Վլադիմիրի Ասլանյանին:

13 Վարկեր և փոխառություններ

		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Անվանում	Արժույթ	Արտարժույթ	հազ. դրամ	Արտարժույթ	հազ. դրամ
Արմհոլդինգ ՓԲԸ	RUB	-	-	11,323,560	79,492
Լոտ Կապիտալ ՓԲԸ Ի Էմ Կապիտալ Ֆոնդ	RUB	13,441,526	86,295	9,084,986	63,636
Красная Звезда ООО	RUB	3,110,552	19,970	2,942,552	20,657
Տ-քնսթրաքշն ՓԲԸ	AMD	-	10	-	10
ООО Investgroup	RUB	-	-	73,663,577	517,120
Բրայթ Այդիաս ՍՊԸ	AMD	-	10,197	-	-
Հովակիմյան Վահե	AMD	-	9,145	-	9,145
Ինս Էլեկտրո ՍՊԸ	AMD	-	10,449	-	-
Մաստեր Սիթի ՓԲԸ	AMD	-	155	-	-
ООО Neftgazinvest	RUB	-	32,180	5,012,378	-
ՄԵՏԱԼ ԻՄՊՈՐՏ ՍՊԸ	AMD	-	6,192	-	-
Սյունէներգաշին ՓԲԸ	AMD	-	30,052	-	-
Ընդամենը		-	204,645	-	690,060

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի ֆինանսական լիզինգի գծով 25,576 հազ. դրամ պարտավորություն:

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,248,791	377,612
Ստացված կանխավճարներ	366,605	15,704
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	61,830	34,454
Աշխատավարձի գծով պարտք	68	773
Կրեդիտորական պարտքեր շահաբաժինների գծով	1,050,000	-
Այլ կրեդիտորական պարտքեր	3,104	160
	2,730,398	428,703

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

15 Հասույթ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտադրանքի վաճառքից հասույթ	4,251,832	3,563,402
Ապրանքների վաճառքից հասույթ	725,215	1,468,684
Ծառայությունների մատուցումից հասույթ	132,539	114,686
Աշխատանքների կատարումից հասույթ	20,955	451
	5,130,541	5,147,223

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված արտադրանքի ինքնարժեք	2,373,476	1,642,997
Վաճառված ապրանքների ինքնարժեք	608,830	1,134,088
Ստացված ծառայությունների ինքնարժեք	8,179	-
Կատարված աշխատանքների ինքնարժեք	79,038	260
	3,069,523	2,777,345

17 Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական վարձակալությունից եկամուտ	727	813
Պաշարների վաճառքից եկամուտ	-	22,695
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	32,530	17,498
Վարկերի տոկոսների փոխհատուցումից եկամուտ	23,540	-
Շնորհից եկամուտ	-	1,142
Արտարժույթի փոխարկումից եկամուտներ	3,652	79,253
Այլ եկամուտներ	262	11,449
	60,711	132,850

18 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	59,862	94,175
Տրանսպորտային, ապահովագրական ծախսեր	138,898	88,133
Հիմնական միջոցների մաշվածության, սպասարկման ծախսեր	50,326	18,338
Վարձակալության ծախսեր	14,698	-
Վառելիքի ծախսեր	4,135	-
Այլ ծախսեր	52,574	47,157
	320,493	247,803

19 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	112,317	104,169
Մաշվածության և ամորտիզացիայի, սպասարկման ծախսեր	19,932	5,726
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	411	275
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	11,926	9,879
Վարձակալության ծախսեր	1,933	1,933
Խորհրդատվական ծախսեր	3,690	3,665
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	2,541	3,393
Այլ ծախսեր	10,492	12,607
	163,242	141,647

20 Այլ ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տույժ, տուգանքներ, դատական ծախսեր	440	16,746
Հիմնական միջոցների օտարումից ծախսեր	17,709	16,214
Պաշարների օտարումից ծախսեր	-	22,280
Արտարժույթի փոխարկման ծախսեր	11,108	10,005
Այլ ծախսեր	41,479	106,406
	70,736	171,651

21 Ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի տոկոսի ծախսեր, զուտ	80,353	56,515
	80,353	56,515

22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	121,597	370,655
Հետաձգված հարկ	-	-
	121,597	370,655

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,424,926		1,953,494	
Շահութահարկ 18% (2020թ. 18 տոկոս)	256,487	18.00	351,629	18.00
Չնվազեցվող ծախսեր	(134,890)	(9.47)	19,026	0.97
Շահութահարկի գծով ծախս	121,597	8.53	370,655	18.97

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 4.11-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	677,558	864,257
Տրամադրված փոխառություններ	3,093,504	3,405,051
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,212,135	291,740
	5,983,197	4,561,048

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ, ֆինանսական լիզինգ	204,645	690,060
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,248,791	377,612
	1,453,436	1,067,672

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խումբը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

24.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Խմբի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում հայկական դրամով և արտարժույթով:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը ֆինանսական կորուստներ կարող է կրել:
Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է համախմված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

25 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

26 Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, չվերահսկվող բաժնեմասը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը և փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 13-ում:

Խմբի ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	5,163,001	4,909,672
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,212,135)	(291,740)
Կապիտալ	2,950,866	4,617,932
Ընդհանուր սեփական կապիտալ	5,163,001	4,909,672
Վարկեր և փոխառություններ	204,645	690,060
Ընդհանուր ֆինանսավորում	5,367,646	5,599,732
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.55	0.82

27 Պայմանականություններ

27.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային Ընկերությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Խմբին ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն համախմված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Բիզնեսի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել մատակարարման շղթայի ընդհատումները, ակտիվների արժեզրկումը, աշխատակազմի հասանելիության սահմանափակումը, ճանապարհորդության սահմանափակումը, առևտրի սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, և ղեկավարությունը դեռ չի գնահատել ընթացիկ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա վերոնշյալի ազդեցությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ համախմված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

27.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Խումբն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Խումբն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

27.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում են կարող են էական պարտավորություններ առաջացնել:

28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

28.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է մասնակցի կողմից: Մասնակցի հետ գործարքները ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2021թ.		Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Տրված փոխառություններ	1,945,732	(1,639,235)	445,116	3,139,851

Հազար դրամ	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2021թ.		Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Տրված փոխառություններ	3,139,851	(2,844,973)	1,881,605	4,103,219
Ստացված փոխառություններ	-	(2,164,063)	1,820,273	343,790

28.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր կազմակերպության տնօրեն Տիգրան Ասլանյանի աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	1,119	1,114
	1,119	1,114